

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԿԱՆՈՆՆԵՐ**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ԳԼՈՒԽ 1 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՌԱՐԿԱՆ.....	3
ԳԼՈՒԽ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 3 ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏՆԵՐԸ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	5
ԳԼՈՒԽ 4 ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	7
ԳԼՈՒԽ 5 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴԵՊՈ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	8
ԳԼՈՒԽ 6 ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔԸ	10
ԳԼՈՒԽ 7 ԴԵՊՈ ՀԱՇՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ: ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ.....	14
ԳԼՈՒԽ 8 ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	17
ԳԼՈՒԽ 9 ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄ.....	18
ԳԼՈՒԽ 10 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ, ԶԵՂՋԱՏՈԿՈՍԻ, ՏՈԿՈՍԱՅԻՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՎՃԱՐՈՒՄ.....	19
ԳԼՈՒԽ 11 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ.....	19
ԳԼՈՒԽ 12 ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ	37
ԳԼՈՒԽ 13 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	41
ԳԼՈՒԽ 14 ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ.....	42
ԳԼՈՒԽ 15 ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ.....	43
ԳԼՈՒԽ 16 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	44
ԳԼՈՒԽ 17 ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	44
ԳԼՈՒԽ 18 ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	45

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՌԱՐԿԱՆ

1. Պետական պարտատոմսերի պահառության գործունեության կանոնները (այսուհետ Կանոններ) կարգավորում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) պարտատոմսերի Պահառության ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները, ինչպես նաև ծառայում են Պահառուի և հաճախորդի միջև պարտատոմսերի Պահառության հետ կապված հարաբերությունների ձևավորման հիմք:
2. Սույն պայմանները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ Կենտրոնական Բանկի (այսուհետ նաև ՀՀ ԿԲ) նորմատիվային իրավական ակտերի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող նորմատիվային իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան:
3. Սույն Կանոնների պայմանական սեփականատեր և սույն Կանոններով սահմանված բիզնես գործընթացի իրականացման (ապահովման) պատասխանատու է հանդիսանում Բանկի Գանձապետարանի Ներդրումային ծառայությունների բաժինը:

ԳԼՈՒԽ 2

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն պայմաններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
 - 1) «Թողարկող». Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և ՀՀ Կենտրոնական Բանկ:
 - 2) «Պետական պարտատոմսեր». Հայաստանի Հանրապետության անունից թողարկված պետական գանձապետական պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր.
 - 3) «Գործակալ». Թողարկողի և ՀՀ ԿԲ հետ Պետական պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր կնքած անձ:
 - 4) «Պահառու». “ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ-ի Պահառության գործունեություն իրականացնող ստորաբաժանում, որում ըստ առանձին հաճախորդների՝ հաշվառվում են վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը:
 - 5) «Հաճախորդ». Ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ անձ), որի հետ Պահառուն ունի պարտատոմսերի Պահառության գործող պայմանագիր և որը Պահառության հանձնված

պարտատոմսերի սեփականատեր է կամ այդ պարտատոմսերի նկատմամբ ունի այլ գույքային իրավունքներ:

- 6) «Էլեկտրոնային հաղորդագրություն». Բանկի կողմից հաստատված հատուկ ֆորմատներով կազմված էլեկտրոնային ստանդարտացված հաղորդագրություն, որի միջոցով ներկայացվում են աճուրդի հայտերը, դեպո հանձնարարականները, դրանց ընդունման, կատարման, մերժման և այլ հաղորդագրությունները:
- 7) «Պահառության պայմանագիր». Պայմանագիր որի հիման վրա Պահառության գործառնության շրջանակում ծագում են Պահառուի կողմից Հաճախորդին Պահառության ծառայություններ մատուցելու հետ կապված Հաճախորդի և Պահառուի իրավունքներն ու պարտականությունները:
- 8) «Լիազորված ներկայացուցիչ». անձ, որը նշանակված է հաճախորդի կողմից հաճախորդի դեպո հաշվով (դեպո հաշվի բաժնով) Պահառության գործառնությունների իրականացման նպատակով և Պահառուի մոտ ունի լիազոր ներկայացուցչի քարտ:
- 9) «Դեպո հաշիվ». Պահառուի կողմից վարվող արժեթղթերի հաշվառման անձնական հաշիվ, որն իրենից ներկայացնում է Պահառուի կողմից վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջություն հաշվետիրոջը՝ հաշվետիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերի, այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և Պահառուի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ:
- 10) «Դեպո հաշվի բաժին». դեպո հաշվում կատարվող գրառումների որոշակի խումբ, որոնք միևնույն կարգավիճակն ունեցող ենթահաշիվների ամբողջություն են:
- 11) «Ենթահաշիվ». դեպո հաշվի ներքո բացված հաշիվ, որում հաշվառվում են առանձին կարգավիճակի պարտատոմսերը: Ենթահաշիվը պարտատոմսերի հաշվառման նվազագույն անբաժանելի միավորն է: Տվյալ կարգավիճակում համախմբվում են այն պարտատոմսերը, որոնցով կարելի է կատարել միևնույն խումբ Պահառության գործառնություններ: Դեպո հաշվում հաշվառվող պարտատոմսերը կարող են ունենալ ազատ, առևտրի համար նախատեսված, հավատարմագրային կառավարման հանձնված, գրավադրված, որպես գրավ ընդունված, կալանված, գրավադրված-կալանված և ՀՀ նորմատիվային իրավական ակտերով սահմանված այլ կարգավիճակներ:
- 12) «Պարտատոմսերի ներպահառուական փոխանցումներ». հաճախորդի դեպո հաշվից պարտատոմսերի փոխանցում իր կամ այլ հաճախորդի՝ Պահառուի մոտ բացված դեպո հաշվին:
- 13) «Նույնականացում». Պահառուական գործառնության հանձնարարականը ստորագրող անձի վերաբերյալ գրառված որոշակի տեղեկությունների և նրա կողմից Պահառուին ներկայացված փաստաթղթերում պարունակվող որոշակի տեղեկությունների համադրման միջոցով անձի ինքնության հաստատման

գործընթաց:

- 14) «Հաշվառման գրքեր». պարտատոմսերի հաշվառման քարտեր և պարտատոմսերի հաշվառման մատյաններ:
- 15) «Քարտ». այն հաշվառման գիրքն է, որում արտացոլվում է Պահառության հաշվառման օբյեկտների վավերապայմանների ընթացիկ վիճակը:
- 16) «Մատյան». այն հաշվառման գիրքն է, որում արտացոլվում են Պահառուական գործունեություններին առնչվող հաջորդական գրառումներ:
- 17) «Գործառնության նախաձեռնում» դեպո հանձնարարականի և/կամ սույն կանոններով սահմանված այլ փաստաթղթերի ներկայացում Պահառուին, որոնց հիման վրա սկսվում է տվյալ գործառնության իրականացումը:
- 18) «Դեպո հանձնարարականի վավերականության ստուգում». դեպո հանձնարարականի ստուգում, որի ընթացքում ստուգվում է դեպո հանձնարարականի լրացման ճշտությունը և դեպո հանձնարարականի ներկայացումը համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:
- 19) «Բորսայական առևտուր». “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ ֆոնդային բորսաներում պարտատոմսերի առուվաճառքի գործարքների կնքումն է:
- 20) «Պարտատոմսերի արտաբորսայական առևտուր». Պարտատոմսերով երկրորդային շուկայում բրոքերային գործունեություն իրականացնող անձանց միջոցով ֆոնդային բորսայից դուրս կամ անմիջապես ներդրողների միջև առուվաճառքի գործարքների կնքումն է:
- 21) «Առաքող». պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքի կողմ հանդիսացող անձ, որը սեփականության իրավունքով իրեն պատկանող պարտատոմսերը փոխանցում է գործարքի մյուս կողմին:
- 22) «Ստացող». պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքի կողմ հանդիսացող անձ, որի սեփականությանը փոխանցում են գործարքի մյուս կողմին պատկանող պարտատոմսերը:

ԳԼՈՒԽ 3

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Սույն կանոնները սահմանում են պետական պարտատոմսերի (Այսուհետ՝ պարտատոմս) Պահառության գործունեության իրականացման դրույթները և Պահառության հանձնված պարտատոմսերի հաշվառման ընդհանուր սկզբունքները:
6. Կանոնների Պահառության գործունեության օբյեկտ են հանդիսանում Պետական պարտատոմսերը:
7. Պարտատոմսերի Պահառության գործունեությունը պարտատոմսերի նկատմամբ և

պարտատոմսերից բխող իրավունքների հաշվառման և փոխանցման գործունեությունն է: Պահառության գործունեությունը ներառում է նաև նորմատիվային իրավական ակտերով և Պահառության պայմանագրով սահմանված այն ծառայությունները, որոնք նպաստում են պարտատոմսերով սահմանված իրավունքների իրականացմանը, այդ թվում՝ զեղչատուկուսի, արժեկտրոնային եկամտի, տուկոսների, մարվող պարտատոմսերի գումարների ստացմանը:

8. Կանոնները հանդիսանում են Պահառուի և հաճախորդի միջև կնքվող Պահառության պայմանագրի անբաժանելի մասը, որի դրույթները գերակա են սույն կանոններով սահմանված դրույթների նկատմամբ:
9. Կանոնները կրում են հրապարակային բնույթ և տրամադրվում են յուրաքանչյուր շահագրգիռ անձի՝ վերջինիս պահանջով:
10. Պարտատոմսերը Պահառության հանձնելը չի հանգեցնում Բանկին պարտատոմսերի սեփականության իրավունքի փոխանցմանը: Պահառության հանձնված պարտատոմսերը չեն կարող բռնագանձվել բանկի պարտավորությունների դիմաց և վերջինիս լուծարման դեպքում չեն ընդգրկվում լուծարային գույքի կազմում:
11. Պահառության հանձնված պարտատոմսերի նկատմամբ հաճախորդի իրավունքների իրականացման նպատակով Պահառուն պարտավոր է՝
 - 1) անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու միջոցով ապահովում է հաճախորդի շահերի պաշտպանությունը,
 - 2) դեպո հաշվում գրառումներ կատարել միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում,
 - 3) գրանցել հաճախորդի պարտատոմսերի՝ գրավով և երրորդ անձանց այլ իրավունքով ծանրաբեռնելու փաստերը՝ Պահառության պայմանագրով սահմանված կարգով,
 - 4) համապատասխան հանձնարարականի հիման վրա ապահովել պարտատոմսերի փոխանցումը ինչպես իր մոտ վարվող դեպո հաշվի, այնպես էլ այլ դեպո հաշվի վրա,
 - 5) ապահովում է այլ Պահառուների և անձանց կողմից փոխանցվող իր հաճախորդների պարտատոմսերի ընդունումը,
 - 6) Պահառության հանձնված պարտատոմսերով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրել հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին:
12. Պահառուն պարտավոր է բարեխղճորեն կատարել հաճախորդի հանձնարարականները և, նրա շահերից ելնելով, իրականացնել պարտատոմսերից բխող այն իրավունքները, որոնց կատարման կամ իրականացման պարտավորությունն ստանձնել է պայմանագրով:
13. Հաճախորդին Պահառության ծառայությունների մատուցումը կատարվում է Պահառուի և հաճախորդի միջև կնքված Պահառության պայմանագրի հիման վրա: Պահառության պայմանագրի կնքումը հաճախորդին չի պարտավորեցնում անմիջապես Պահառության հանձնել պարտատոմսեր:
14. Հաճախորդի դեպո հաշվում Պահառության հանձնված պարտատոմսերի վերաբերյալ Պահառուի կողմից կատարված գրառումները հավաստում են պարտատոմսերի նկատմամբ հաճախորդի սեփականության իրավունքը, եթե ՀՀ դատական մարմինների որոշումներով այլ բան սահմանված չէ: Պահառուի կողմից պարտատոմսերի իրավունքի հաշվառման

ցանկացած պահի դրությամբ Պահառուի կողմից կատարվում է պարտատոմսերի սեփականության իրավունքը վկայակոչող մեկ գրառում: Պահառության հանձնված պարտատոմսերի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ հաճախորդի դեպո հաշվում համապատասխան գրառում կատարելու պահից:

15. Պահառուն պատասխանատվություն է կրում Պահառության հանձնված պարտատոմսերի սեփականության իրավունքը հավաստող գրառումների պահպանման, արժանահավատության և դրանց ժամանակին իրականացման համար:
16. Հաճախորդի առաջին իսկ պահանջով, ինչպես նաև Պահառության պայմանագրի դադարեցման, Պահառուի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու կամ դադարելու, ինչպես նաև Պահառուի լուծարման դեպքերում Պահառուն հաճախորդին տրամադրում է նրան պատկանող պարտատոմսերը՝ հաճախորդի ցուցումով այլ Պահառուի մոտ հաճախորդի անունով վերագրանցելու միջոցով: Եթե սահմանված ժամկետում Պահառուն չստանա ցուցում հաճախորդից, ապա նա պետք է գործի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ՀՀ Կենտրոնական Բանկի և ՀՀ Ֆինանսների նախարարության հետ կնքված պայմանագրերին համաձայն:
17. Պահառուն փոխհատուցում է Պահառության իրականացման ժամանակ իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու արդյունքում հաճախորդին պատճառված վնասը, եթե չապացուցվի, որ վնասներն առաջացել են անհաղթահարելի ուժի պատճառով կամ հաճախորդի մեղքով:
18. Պահառության գործունեության շրջանակում Պահառուն կարող է իր հաճախորդին առաջարկել հետևյալ ծառայությունները՝
 - 1) հաճախորդի դեպո հաշիվ բացելը և վարելը՝ գրանցելով այդ հաշվի հետ կապված յուրաքանչյուր գործարքի ժամկետն ու էական պայմանները,
 - 2) հաճախորդի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների գրանցումը,
 - 3) պարտատոմսերի նկատմամբ և պարտատոմսերից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայություններ:
19. Պահառուն իրավունք ունի հաճախորդին լրացուցիչ այլ ծառայություններ մատուցել օրենքով և իրավական ակտերով, ինչպես նաև Պահառուի և հաճախորդի միջև կնքված պայմանագրերին համապատասխան:

ԳԼՈՒԽ 4

ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

20. Պահառուն պարտավոր է ապահովել հաճախորդի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը:
21. Գաղտնապահական տեղեկատվություն են համարվում՝
 - 1) հաճախորդի մասին տեղեկությունները,
 - 2) հաճախորդի դեպո հաշվի վիճակի վերաբերյալ տեղեկությունները,
 - 3) հաճախորդի դեպո հաշվով կատարվող գործառնությունների վերաբերյալ

տեղեկությունները,

4) այլ տեղեկությունները, որոնց գաղտնապահության վերաբերյալ առկա է հաճախորդի գրավոր դիմումը կամ նման տեղեկատվությունը դասվել է գաղտնապահական տեղեկությունների շարքին՝ Պահառության պայմանագրի պայմաններին համապատասխան:

22. Պահառուի մոտ վարվող դեպո հաշիվների վերաբերյալ տեղեկությունը կարող է տրամադրվել միայն հաճախորդին, նրա լիազորված ներկայացուցչին և պետական լիազոր մարմնին (ՀՀ օրենսդրությամբ նրանց լիազորությունների շրջանակում), ինչպես նաև թողարկողին և նրա լիազորված ներկայացուցչին, ՀՀ Կենտրոնական Բանկ և օրենքով սահմանված այլ անձանց:

23. Պահառուի կողմից հաճախորդի դեպո հաշվի մասին գաղտնիք ներկայացնող տեղեկությունների բացահայտման դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, հաճախորդն իրավունք ունի Պահառուից պահանջել խախտված իրավունքի վերականգման նպատակով վնասի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

24. Պահառուն իրավունք ունի գաղտնապահական տեղեկատվություն բացահայտել երրորդ անձանց՝ հաճախորդի գրավոր համաձայնության դեպքում:

ԳԼՈՒԽ 5

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴԵՊՈ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

25. Պարտատոմսերի նկատմամբ և պարտատոմսերից բխող սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառումը, այդ իրավունքների ամրագրումը, փոխանցումը, դադարեցումը և այլ գործառնությունների գրանցումը Պահառուն իրականացնում է դեպո հաշվառման համակարգի համաձայն:

26. Դեպո հաշվառման համակարգը կարող է վարվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով:

27. Դեպո հաշվառման համակարգի տարրեր են՝

1) պարտատոմսերով գործառնությունների հիմք հանդիսացող փաստաթղթերը և (կամ) հանձնարարականները (հանձնարարականները),

2) դեպո հաշվառման քարտերը, որոնք նախատեսված են դեպո հաշիվների և դեպո հաշվառման այլ տարրերի ընթացիկ վիճակը և այդ տարրերը բնութագրող այլ տեղեկատվությունն արտացոլելու համար:

3) դեպո հաշվառման մատյանները, որոնք պարունակում են հաջորդական գրառումներ և նախատեսված են պարտատոմսերով գործառնությունների կատարումը և դեպո հաշվառման տարրերում փոփոխությունները գրանցելու համար,

4) քաղվածքները, հաշվետվությունները, հաստատումները և (կամ) մերժումները, որոնք պարունակում են հանձնարարականների կատարման արդյունքների, դեպո հաշիվների,

դեպո հաշվառման քարտերի և մատյանների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

28. Դեպո հաշվառումը կատարվում է պարտատոմսերի անվանական արժեքով:

29. Պահառուն վարում է հետևյալ տեսակի հաշվառման գրքեր՝

1) Հաշվառման քարտեր՝

ա. պարտատոմսերի թողարկումների քարտ,

բ. հաճախորդների քարտ,

գ. դեպո հաշվի քարտ,

դ. սեփականության իրավունքից բացի, պարտատոմսերի նկատմամբ այլ գույքային իրավունքների հաշվառման քարտ:

2) Հաշվառման մատյաններ՝

ա. ընդունված հանձնարարականների մատյան, որտեղ արտացոլվում են Պահառուի կողմից ընդունված բոլոր հանձնարարականները:

բ. գործառնությունների մատյան, որտեղ արտացոլվում է Պահառուի կողմից կատարված և (կամ) կատարման ընթացքում գտնվող բոլոր գործառնությունների մասին տեղեկատվությունները:

գ. ուղարկված քաղվածքների և հաշվետվությունների մատյան, որտեղ գրանցվում են Պահառուի կողմից ուղարկված բոլոր հաշվետվությունները, հաստատումները, քաղվածքները:

30. Հաշվառման գրքերի նկատմամբ պահանջները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ: Պահառության գործունեության շրջանակում կարող են օգտագործվել այլ հաշվառման գրքեր: Որոշ հաշվառման գրքեր ձևավորվում են Պահառուի էլեկտրոնային համակարգի շահագործման պայմաններում:

31. Պահառուն իրավունք ունի ինքնուրույն փոփոխել հաշվառման գրքերի անվանումները և դրանց վարման կարգերը՝ Պահառուի գործադիր մարմնի ղեկավարի կարգադրության (հրամանի) կամ ներքին հրահանգների հիման վրա:

32. Պարտատոմսերով հավաստված իրավունքների պաշտոնական ամրագրումը, ինչպես նաև այդ իրավունքների փոխանցումը, վերապահումը և սահմանափակումն իրականացվում են երկմակարդակ Պահառուական համակարգով:

33. Պահառուի մոտ բացված դեպո հաշիվներում պարտատոմսերը հաշվառվում են ըստ կրկնակի գրանցման (հաշվառման) սկզբունքի: Յուրաքանչյուր պարտատոմս Պահառության ընթացքում արտացոլվում է երկու անգամ՝ մեկ անգամ հաճախորդի դեպո հաշվում (պասիվային հաշիվներ), մյուս անգամ՝ պարտատոմսերի պահպանման վայրի համար բացված պարտատոմսերի հաշվում (ակտիվային հաշիվներ): Պահառուի մոտ հաշվառվող յուրաքանչյուր պարտատոմսի դասի համար պետք է պահպանվի հետևյալ սկզբունքը. բոլոր պասիվային հաշիվներում հաշվառվող միևնույն դասի պարտատոմսերի ընդհանուր քանակը

պետք է հավասար լինի տվյալ դասի պարտատոմսերի ակտիվային հաշիվներում հաշվառվող պարտատոմսերի ընդհանուր քանակին:

34. Պահառուի մոտ վարվող գրառումները հավաստում են պարտատոմսերի նկատմամբ և (կամ) պարտատոմսերից բխող անձանց իրավունքները, եթե դատական կարգով այլ բան չի ապացուցվում:
35. Դեպո հաշվառման ժամանակ յուրաքանչյուր պահի դրությամբ՝ Պահառուի մոտ կարող է գոյություն ունենալ կոնկրետ պարտատոմսի նկատմամբ իրավունքները հավաստող միայն մեկ գրառում:
36. Պահառուն կարող է դեպո հաշվի ներքո բացել ենթահաշիվներ, որում կհաշվառվեն տվյալ կարգավիճակի առանձին դասի պարտատոմսերը: Մասնավորապես տվյալ կարգավիճակում համախմբվում են այն պարտատոմսերը, որոնցով կարելի է կատարել միևնույն խմբի Պահառության գործառնություններ:
37. Բոլոր քարտերը, մատյանները, հաշվետվական նյութերը և Պահառության հաշվառման գրառումները պահպանվում են Պահառուի մոտ՝ դրանց ստացման (ձևավորման) պահից, իսկ քարտերի և մատյանների դեպքում վերջին գրառման կատարման պահից նորմատիվային իրավական ակտերով սահմանված ժամկետներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 6

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔԸ

38. Պահառուն Պահառության գործառնություններ է կատարում հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի և Պահառության պայմանագրով նախատեսված այլ անձանց հանձնարարականների հիման վրա: Գործառնությունները կարող են կատարվել միայն օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, Պահառության գործունեությունը կարգավորող կանոններով, Պահառության պայմանագրով, ինչպես նաև Պահառուի և ՀՀ Ֆինանսների նախարարության, Կենտրոնական Բանկի միջև կնքված պայմանագրերով սահմանված գրավոր, այդ թվում նաև էլեկտրոնային կարգադրությունների հիման հիման վրա: Որպես կարգադրություն կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) հաճախորդի կամ նրա լիազորած անձի կողմից սահմանված ձևով լրացված և ներկայացված դեպո հանձնարարականները,
 - 2) պարտատոմսերի նկատմամբ իրավունքներ ունեցող անձանց կողմից սահմանված ձևով լրացված և ներկայացված դեպո հանձնարարականները, ինչպես նաև իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ այդ իրավունքները հավաստող այլ փաստաթղթերը,
 - 3) դատական վճռի հիման վրա պարտատոմսերի նկատմամբ իրավունքների սահմանափակման, փոխանցման, դադարեցման գործառնությունների կատարման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական ակտերը, հարկադիր կատարողի որոշումները:
39. Պահառուական գործառնության իրականացման համար՝ հանձնարարականների ներկայացման եղանակը ընտրվում է Հաճախորդի կողմից, դրանք են՝
 - 1) Թղթային: Թղթային ձևով հանձնարարականները ներկայացվում է 2 օրինակից, ընդ որում

մեկ օրինակը մնում է Պահառուի մոտ, մյուս օրինակը “Հանձնարարականն ընդունված է” նշագրմամբ և պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ վերարդարձվում է հաճախորդին: Թղթային եղանակով հանձնարարականը ներկայացնելու դեպքում Բանկի պատասխանատու աշխատակիցը ստուգում է այն ներկայացնող անձի լիազորությունները:

2) Էլեկտրոնային եղանակով հանձնարարականների փոխանցում: Էլեկտրոնային եղանակով հանձնարարականը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ էլեկտրոնային հասցեին կամ ՍիԲիԷյնթ-ին: Այլ հասցեով ուղարկված հանձնարարականը համարվում է չստացած: Հանձնարարականի վավերությունը ստուգելուց հետո պատասխանատու աշխատակիցը ստորագրում է այն և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո Հաճախորդին ուղարկում է հանձնարարականի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Հաղորդագրությունը ուղարկվում է Հաճախորդի կողմից տրամադրված կամ Ֆաքսիմիլային, կամ էլեկտրոնային հասցեին: Անհրաժեշտության դեպքում՝ Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Պահառուին փոխանցի էլեկտրոնային փոստով ուղարկված հանձնարարականի բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված հանձնարարականը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան նրա բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված հանձնարարականի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային փոստով ուղարկված տարբերակը: ՍիԲիԷյնթ համակարգով սահմանված հասցեներով ուղարկված հանձնարարականը հավասարազոր է թղթային հանձնարարականին:

3) Ֆաքսիմիլային եղանակով հայտի փոխանցում: Ֆաքսիմիլային եղանակով հանձնարարական ներկայացնելու համար, հաճախորդը նախորոք հեռախոսով պետք է տեղեկացնի Պատասխանատու աշխատակցին՝ հանձնարարական ուղարկելու փաստի վերաբերյալ: Հանձնարարականը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ հեռախոսահամարին: Այլ հեռախոսահամարով ուղարկված հանձնարարականը համարվում է չստացած: Հանձնարարականը ստուգելուց հետո Պատասխանատու աշխատակիցը ստորագրում է այն և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո Հաճախորդին ուղարկում է հանձնարարականի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Անհրաժեշտության դեպքում՝ Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկ փոխանցի ֆաքսիմիլային եղանակով ուղարկված հանձնարարականի բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված հանձնարարականն ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան նրա բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված հանձնարարականի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում ֆաքսիմիլային եղանակով ուղարկված տարբերակը:

40. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, երբ դեպո հաշվում գրառումներ կատարելու նախաձեռնությունը պատկանում է Պահառուին, ապա այն իրականացնելու համար հիմք են հանդիսանում ծառայողական հանձնարարականները և ծառայողական փաստաթղթերը, որոնք հաստատում են պարտատոմսերի փոխանցման փաստը: Հանձնարարականի տրամադրումը պետք է ուղեկցվի Պահառուական գործառնության կատարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերով:

41. Հանձնարարականի տրամադրումը պետք է ուղեկցվի Պահառուական գործառնության

կատարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերով:

42. Հանձնարարականների ձևը կախված է մատուցվող ծառայության տեսակից և սահմանված է սույն պայմաններով: Հանձնարարականը պետք է ընդգրկի դրա իրականացման համար անհրաժեշտ բոլոր վավերապայմանները և բավարարի հանձնարարականի ձևին ներկայացված պահանջներին:
43. Պահառուն պետք է նույնականացնի հանձնարականը ստորագրող անձին և նրա ստորագրությունը:
44. Անձի ինքնությունը համարվում է հաստատված, եթե համադրվող տեղեկությունները ամբողջությամբ կամ ոչ էական շեղումներով համապատասխանում են տրամադրված անձը հաստատող փաստաթղթում և փաստաթղթերում ներառված համապատասխան տեղեկություններին: Եթե նույնականացման արդյունքում հաստատվում է անձի ինքնությունը, ապա այդ պահին նույնականացված անձը ստորագրում է փաստաթղթերը, իսկ Պահառուի աշխատակիցը վավերացնում է դրանք:
45. Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում նույնականացումն իրականացվում է հաճախորդի քարտում նշվող էլեկտրոնային հասցեներով:
46. Պահառուի հաշվառման գրքերում գրանցում կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը (բացառությամբ հանձնարարականի) կարող են ներկայացվել ընդունման-հանձնման ակտի կնքման միջոցով:
47. Էլեկտրոնային ձևով հանձնարարականի, այդ թվում՝ Պահառուի հաշվառման գրքերում գրանցում կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ընդունումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և Պահառության պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում: Պահառուն կարող է հաճախորդներին տրամադրել էլեկտրոնային հանձնարարականներ ներկայացնելու համապատասխան համակարգ, որի շրջանակում տրամադրվող հանձնարարականը Պահառուի կողմից կհամարվի ընդունելի:
48. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Պահառուն կատարում է պետական մարմինների, մասնավորապես՝ դատական կամ նախաքննական մարմինների գրավոր հանձնարարականները, որոնք ուղեկցվում են համապատասխան փաստաթղթերով (դատարանի որոշում, կատարման թերթիկ, կալանքի վերցնելու մասին որոշում և այլն):
49. Հանձնարարականը ենթակա է կատարման դրանում նշված օրվա ընթացքում կամ դրա և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման օրվա ընթացքում՝ գործառնության կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում (պարտատոմսերի բավարար մնացորդ, հաշվի կարգավիճակ, հակադարձ հանձնարարականի առկայություն՝ ներպահառուական փոխանցումների դեպքում), սակայն ոչ ուշ, քան հանձնարարականի տրմանը հաջորդող 10-րդ օրացույցային օրը: Վերջինիս չբավարարման դեպքում հանձնարարականը հանվում է և կազմվում է գործառնության չկատարման վերաբերյալ հաշվետվություն:
50. Հանձնարարականները ենթակա են կատարման ըստ իրենց ընդունման հերթականության: Պարտատոմսերի արգելադրման կամ պարտատոմսերի շրջանառության սահմանափակման հանձնարարականները ենթակա են կատարման առաջնահերթորեն:
51. Եթե հանձնարարականը չի բավարարում սահմանված պահանջներին, Պահառուն մերժում է հանձնարարականի ընդունումը: Պահառուական գործառնության կատարումը կարող է

մերժվել, եթե՝

- 1) հանձնարարականը չի բավարարում նրա ձևին ներկայացվող պահանջներին,
- 2) հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ՝ օրինական լինելու հարցում,
- 3) հանձնարարականը պահանջում է այնպիսի գործառնության կատարում, որի իրականացումը սահմանված չէ սույն կանոններով,
- 4) հանձնարարականի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտմանը,
- 5) հաճախորդի դեպո հաշվի կարգավիճակը թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը,
- 6) պարտատոմսերի քանակը և կարգավիճակը (պարտատոմսերի ծանրաբեռնումը երրորդ անձանց իրավունքով, գրավադրում և այլն) թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը,
- 7) հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել պարտատոմսերը,
- 8) հանձնարարականի հետ ներկայացված չեն անհրաժեշտ փաստաթղթերը,
- 9) հանձնարարականի տրման պահից 10 օրացուցային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որի դեպքում հնարավոր կդառնար կատարել հանձնարարականը,
- 10) բացակայում է հակադարձ հանձնարարականը կամ տվյալները միմյանց չեն համապատասխանում ներպահանջատրուական գործառնության կատարման համար,
- 11) այլ հիմքերի առկայության դեպքում:

52. Պահառուն իրավունք ունի մերժել Պահառուական գործառնության կատարումը, եթե հաճախորդը ժամանակին չի կատարել Պահառուի ծառայությունների դիմաց սահմանված վճարները և/կամ չի փոխհատուցել Պահառուի նախկինում կատարած փաստացի ծախսերը (այդ մասին հաճախորդին ժամանակին տեղեկացրած լինելու պայմանով):

53. Հանձնարարականի մերժումը ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմաններով չնախատեսված հիմքերով չի թույլատրվում:

54. Հանձնարարականի մերժումը կատարվում է գրավոր ձևով՝ նշելով պատճառները: Պահառուի կողմից գրավոր ձևով մերժված հանձնարարականը համարվում է անվավեր և չի կարող հանդիսանալ Պահառուական գործառնությունների կատարման հիմք:

55. Մինչև գործառնության կատարումը Պահառուական գործառնության նախաձեռնողն իրավունք ունի չեղյալ ճանաչել իր կողմից նախապես տրված հանձնարարականը՝ համապատասխան հանձնարարական տրամադրելու միջոցով (Տես Հավելված # 28): Պահառուական գործառնության նախաձեռնողին տրամադրվում է հանձնարարականի չկատարման մասին հաշվետվություն:

56. Չեղյալ կարող է համարվել միայն այն հանձնարարականը, որով ամրագրված գործարքը դեռևս չի կատարվել: Չկատարված գործառնության տակ հասկացվում է այն գործառնությունը, որի իրականացման նպատակով Պահառուի կողմից ընդունվել և գրանցվել է համապատասխան հանձնարարական, սակայն Պահառուի հաշվառման գրքերում դեռևս չեն կատարվել փոփոխություններ:

57. Գործառնության չեղյալ ճանաչման հանձնարարականը պետք է պարունակի չկատարված գործառնության կատարման հիմք հանդիսացող հանձնարարականի տեսակի (հանձնարարականի անվանման), Պահառուի կողմից շնորհված գրանցման համարի և գրանցման ամսաթվի մասին նշումներ: Պահառուն առաջնահերթորեն կատարում է գործառնության չեղյալ ճանաչման հանձնարարականները:
58. Պահառուն կարող է իր մեղքով թույլատրված սխալների վերացման համար կատարել դեպո հաշվի նկատմամբ ճշգրտումներ (ուղղումներ):
59. Պահառուի մեղքով թույլատրված սխալների վերացման համար գործառնությունները կատարվում են Պահառուի կողմից ներքին փաստաթղթերի հիման վրա և առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի: Գործառնությունը կատարվում է սխալների բացահայտման օրվա ընթացքում և հակադարձ գործառնությունների կատարման միջոցով: Պահառուն ճշգրտումների կատարման օրվա ընթացքում հաճախորդին ուղարկում է ճշգրտման գործառնությունների կատարման մասին ծանուցում: Նշված գործառնությունների կատարման համար հաճախորդից որևէ վճար չի գանձվում:

ԳԼՈՒԽ 7

ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ: ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ

60. Դեպո հաշիվների սպասարկման շրջանակում Պահառուն կարող է իր հաճախորդին առաջարկել հետևյալ ծառայությունները՝
- 1) Դեպո հաշվի բացում
 - 2) Դեպո հաշվի վավերապայմանների փոփոխություն
 - 3) Դեպո հաշվի փակում
61. Հաշվի բացումը Պահառուի հաշվառման գրքերում հաճախորդի մասին ամփոփ տեղեկությունների մուտքագրման գործընթացն է, որը հնարավորություն է տալիս կատարել նրա դեպո հաշվում հաշվառվող պարտատոմսերով պահաուի կողմից սահմանված ցանկացած գործառնություն:
62. Պահառուի հաճախորդները կարող են լինել՝
- 1) պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող հաճախորդներ, ինչպես նաև պարտատոմսերի գրավառուն,
 - 2) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն դիլերային, բրոքերային, հավատարմագրային կառավարման գործունեությամբ զբաղվող անձինք, որոնք չեն իրականացնում պարտատոմսերով հավաստված իրավունքների պաշտոնական ամրագրումը և չեն կարող հավաստել այդ իրավունքները:
63. Դեպո հաշիվը բացվում է Պահառուի մոտ հաճախորդի բանկային (ընթացիկ) հաշվի առկայության դեպքում:
64. Դեպո հաշվի բացումը կատարվում է Պահառուի և հաճախորդի միջև Պահառության պայմանագիր կնքելու, ինչպես նաև դրանով և սույն պայմաններով նախատեսված փաստաթղթերի ամբողջ փաթեթը ներկայացնելու դեպքում: Բոլոր փաստաթղթերը պետք է

ներկայացվեն թղթային ձևով: Եթե հաճախորդը նախկինում Բանկ ներկայացրել է տվյալ փաստաթղթերը հաշվարկային կամ այլ հաշիվ բացելու համար, ապա փաստաթղթերի կրկնակի ներկայացում չի պահանջվում: Այն դեպքում, երբ որևէ փաստաթուղթ, այդ թվում՝ լիազորագրերը անվավեր կամ ուժը կորցրած են ճանաչվել, ապա հաճախորդը պարտավոր է ներկայացնել նշված փաստաթղթերը նոր խմբագրությամբ:

65. Դեպո հաշվի բացման համար ներկայացվող փաստաթղթերն են՝

1) իրավաբանական անձանց համար

ա. Հաշիվ բացելու մասին դիմում (տես Հավելված # 1-ա),

բ. Հաճախորդի քարտ (տես Հավելված # 2),

գ. Հաճախորդի լիազորված ներկայացուցչի քարտ առկայության դեպքում (տես Հավելված # 3, 4),

դ. Կանոնադրության պատճեն՝ իր բոլոր գրանցված փոփոխություններով և լրացումներով,

ե. Պետական գրացման վկայականի պատճեն,

զ. ՀՎՀՀ տեղեկանքի պատճեն,

է. Լիազորված ներկայացուցչի նշանակման համապատասխան լիազորագիր,

ը. Առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձի (անձանց) համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճեն,

թ. Արժեթղթերի շուկայում մասնագիտացված հավատարմագրային կառավարման, բրոքերային, դիլերային գործունեությամբ զբաղվող անձանց դեպքում համապատասխան լիցենզիայի պատճեն,

ժ. Եթե հաճախորդի լիազորված ներկայացուցիչը ֆինասական ծառայություններ մատուցող կազմակերպություն է, ապա այս դեպքում ներկայացվում է համապատասխան լիցենզիայի պատճեն,

ի. Պահառուի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում):

2) ֆիզիկական անձանց համար

ա. Հաշիվ բացելու մասին դիմում (տես Հավելված # 1 -բ),

բ. Հաճախորդի քարտ (տես Հավելված # 5),

գ. Հաճախորդի անձի ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճեն,

դ. Սոցիալական քարտի/հանրային ծառայությունների համարանիշի պատճեն

(առկայության դեպքում),

ե. Հաճախորդի լիազորված ներկայացուցչի քարտ՝ առկայության դեպքում (տես Հավելված # 3, 4),

զ. Լիազորված ներկայացուցչի նշանակման համապատասխան լիազորագիր,

է. Եթե հաճախորդի լիազորված ներկայացուցիչը ֆինասական ծառայություններ մատուցող ն ընկերությունն է, ապա այս դեպքում ներկայացվում է համապատասխան լիցենզիայի պատճեն,

66. Պահառության պայմանագիրը պետք է պարտադիր պարունակի հետևյալ դրույթները՝

- 1) պարտատոմսերով գործառնությունների կատարման համար հաճախորդի կողմից հանձնարարականների ներկայացման կարգը,
- 2) Պահառուի կողմից հանձնարարականների կատարման ժամկետները,
- 3) հաճախորդին տրամադրվող փաստաթղթերի ցանկը և տրամադրման կարգը,
- 4) սույն կարգով սահմանված Պահառուի իրավասությունները, պարտավորությունները և պատասխանատվությունը,
- 5) հաճախորդի իրավասությունները և պարտավորությունները,
- 6) պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխման և դադարեցման կարգը,
- 7) հղում պետական պարտատոմսերի գործունեության սույն պայմաններին,
- 8) ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

67. Պահառության պայմանագրի կնքումը և դեպո հաշվի բացումը չի պահանջում պարտատոմսերի անմիջապես մուտքագրում դեպո հաշվի վրա:

68. Պահառության պայմանագիրը և հաճախորդի քարտը իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի անունից ստորագրում է կանոնադրության կամ լիազորագրի հիման վրա գործող լիազորված ներկայացուցիչը:

69. Առանց Պահառության պայմանագրի առկայության, հաճախորդի անունով կարող է բացվել դեպո հաշիվ միայն Պահառուի գործունեության դադարեցման հետևանքով վերջինիս հաճախորդների պարտատոմսերն այլ Պահառուի մոտ փոխանցելու դեպքում, սակայն այդ հաշիվներով գործառնություններ կարող են կատարվել միայն հաճախորդի հետ Պահառության պայմանագիրը կնքելուց հետո:

70. Պահառուն իրավասու է օգտագործել հաճախորդի քարտում ներկայացված տեղեկությունները “Փողերի վրացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին” ՀՀ օրենքով սահմանված պահանջների ապահովման նպատակով:

71. Դեպո հաշվի բացման ժամանակ դրան շնորհվում է Պահառուի կողմից առանձնահատուկ տարբերակիչ համար, որը հնարավորություն է տալիս նույնականացնել հաճախորդին:

Հաճախորդին տրամադրվող դեպո հաշվի համարակալումը իրականացվում է համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված կարգի և կարող է միակողմանիորեն փոխվել՝ պայմանով, որ հաճախորդին դեպո հաշվի համարի փոփոխության մասին ծանուցելու պահից երեք ամսվա ընթացքում Պահառուն պարտավորվում է ընդունել դեպո հաշվի հետ գործառնություն կատարելու հանձնարարական՝ նախկին հաշվի համարով նշված լինելու դեպքում:

72. Պահառուն հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո 3 օրվա ընթացքում հաճախորդին տրամադրում է «Հաշիվ բացելու մասին տեղեկանք» (Տես Հավելված # 6 ա և Հավելված # 6բ):
73. Դեպո հաշվի լիազորված ներկայացուցչի լիազորությունների տրման և/կամ դադարեցման գործառնության նախաձեռնությունը պատկանում է հաճախորդին: Հաճախորդը կարող է նշանակել դեպո հաշվի լիազորված մի քանի ներկայացուցիչներ՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով նրանց լիազորությունները: Դեպո հաշվի լիազորված ներկայացուցչի գրանցումը կատարվում է հաճախորդի կողմից գործառնության կատարման համար ներկայացված դիմումի, համապատասխան լիազորագրի և լիազորված ներկայացուցչի քարտի հիման վրա: Դեպո հաշվի լիազորված ներկայացուցչի լիազորությունների ժամկետը սահմանվում է լիազորագրով: Լիազորագիրը կարող է վաղաժամկետ դադարացվել՝ լիազորված ներկայացուցչի լիազորությունները դադարեցնելու մասին հաճախորդի կողմից գրավոր դիմում ներկայացնելու միջոցով:
74. Լիազորագրի ժամկետի ավարտից հետո Պահառուին ներկայացվում է նոր լիազորագիր:
75. Պահառուն կարող է բացել նաև Հավատարմագրային կառավարչի դեպո հաշիվ՝ հավատարմագրային կառավարման հանձնված արժեթղթերի (այդ թվում պարտատոմսերի) հաշվառման համար: Հավատարմագրային կառավարման հանձնված պարտատոմսերը հավատարմագրային կառավարման հիմնադրի (շահառուի) դեպո հաշվում հաշվառելու դեպքում հավատարմագրային կառավարիչը հանդես է գալու որպես լիազոր ներկայացուցիչ (լիազոր ներկայացուցչի քարտում պետք է կատարվի համապատասխան նշումներ): Տվյալ հաշվում պարտատոմսերը պետք է հաշվառվեն ըստ առանձին հիմնադիրների (շահառուների), որոնց տրվում է առանձին դեպո հաշվեհամար: Հավատարմագրային կառավարչի Պահառության պայմանագրով պետք է սահմանվի դրույթ առ այն, որ հավատարմագրային կառավարիչը, առնվազն օրական պարբերականությամբ, իր հաշվում գրանցված հիմնադիրների պարտատոմսերով գործարքների մասին կամ հիմնադիրների պարտատոմսերի մնացորդների մասին տեղեկացնում է Պահառուին, բացառությամբ, եթե կառավարման արդյունքում հիմնադիրների պարտատոմսերի մնացորդները չեն փոփոխվել (Տես Հավելված #7): Հավատարմագրային կառավարման հանձնված արժեթղթերի հաշվառումն իրականացվում է սույն պայմաններով սահմանված ընդհանուր ընթացակարգով, բացառությամբ հավատարմագրային կառավարչի հաշվում ներպահառուական գործարքների (շահառուների միջև իրականացված գործարքներ), այս դեպքում հավատարմագրային կառավարիչը Պահառուին օրական կտրվածքով պետք է ներկայացնի «Ներքին փոխանցման հանձնարարական » (Տես Հավելված # 8):

ԳԼՈՒԽ 8

ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

76. Հաճախորդը պարտավոր է անմիջապես Պահառուին ներկայացնել դեպո հաշվի բացման

համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև ժամանակին ծանուցել հաճախորդի կապի միջոցների վավերապայմաններում և պարտատոմսերի հաշվով գործառնություններ կատարելու լիազորություն ունեցող անձանց ցուցակում փոփոխությունները: Նշված փոփոխությունների մասին ժամանակին չտեղեկացնելու դեպքում Պահառուն պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից հաշվետվություններ, քաղվածքներ ժամանակին չստանալու համար, ինչպես նաև դրա հետևանքով պատճառված վնասի համար:

77. Դեպո հաշվի վավերապայմանների փոփոխությունը կատարվում է հաճախորդի և/կամ նրա լիազորված ներկայացուցչի նախաձեռնությամբ՝ հաճախորդի և/կամ նրա լիազորված ներկայացուցչի անվանման (անվան, ազգանվան), գտնվելու վայրի (հաշվառման վայրի) և այլ տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները հաճախորդի և/կամ նրա լիազոր ներկայացուցչի քարտում լրացնելու միջոցով (Տես Հավելվածներ 2, 3, 4, 5): Լրացված քարտին կից ներկայացվում են փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:
78. Դեպո հաշվում տեղեկությունների փոփոխությունը Պահառուն գրանցում է փաստաթղթերի ներկայացման պահից մեկ օրվա ընթացքում, եթե փոփոխությունը գրանցելու համար ներկայացված փաստաթղթերը ամբողջական են և բավարարում են Պահառուի կողմից սահմանված պահանջներին:
79. Դեպո հաշվում տեղեկությունների փոփոխության (այդ թվում՝ նոր տեղեկությունների մուտքագրման) նպատակով սույն պայմաններով սահմանված փաստաթղթերի հետ միաժամանակ Պահառուական գործառնությունների կատարման համար ներկայացված փաստաթղթերը ստորագրող անձը Պահառուին է տրամադրում նաև անձը հաստատող փաստաթուղթը, որը նույնականացման գործընթացն ավարտելուց հետո ենթակա է անմիջապես վերադարձման:

ԳԼՈՒԽ 9

ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄ

80. Դեպո հաշիվը չի կարող փակվել, եթե նրանում պարտատոմսեր են հաշվառվում: Դեպո հաշվում պարտատոմսերի առկայության դեպքում Պահառուն գրավոր ծանուցում է հաճախորդին՝ պարտատոմսերը վերադարձնելու նպատակով պարտատոմսերի դուրս գրման հանձնարականի ներկայացման անհրաժեշտության մասին:
81. Զրոյական մնացորդներ ունեցող դեպո հաշիվները կարող են փակվել.
- 1) հաճախորդի ցանկությամբ,
 - 2) պահառության պայմանագրի դադարեցման դեպքում, այդ թվում՝ Պահառուի Պահառության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում,
 - 3) պարտատոմսերի հաշվով առնվազն 1 տարի որևէ գործառնություն չիրականացվելու դեպքում (եթե այլ բան սահմանված չէ Պահառության գործունեությունը կարգավորող կանոններով կամ Պահառության պայմանագրով),
 - 4) Պահառուի լուծարման դեպքում:
82. Հաճախորդի ցանկությամբ դեպո հաշիվը փակվելու համար հաճախորդը պետք է ներկայացնի

“Դեպո հաշիվը փակելու մասին” դիմում՝ համաձայն Հավելված # 9ա և 9բ-ի:

83. Պահառուն չի կարող նախկինում փակված դեպո հաշիվների հաշվեհամարները կրկնակի օգտագործել:
84. Դեպո հաշվի փակումը կատարվում է միայն հաճախորդի կողմից Պահառության ծառայությունների դիմաց վճարելուց և Պահառուի փաստացի ծախսերի փոխհատուցումից հետո՝ Պահառության պայմանագրով սահմանված կարգով:
85. Պարտատոմսերի դուրս գրման հանձնարական տալու վերաբերյալ Պահառուի ծանուցման պահից 10 օրվա ընթացքում Հաճախորդի կողմից պարտատոմսերի “Պարտատոմսերի ազատ առաքման” հանձնարարական չներկայացվելու դեպքում Պահառուն ինքնուրույն կարող է ձեռնարկել Հաճախորդի անունով այդ պարտատոմսերի վերագրանցման հետ կապված գործողություններ՝ ՀՀ Կենտրոնական Բանկի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով: Պահառուն իրավասու է Հաճախորդից պահանջել պարտատոմսերի վերագրանցման հետ կապված ծախսերի փոխհատուցում:
86. Պահառուի նախաձեռնությամբ դեպո հաշվի փակումը կարող է իրականացվել հաճախորդի կողմից Պահառության պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում:
87. Դեպո հաշվի փակման պահից 3 տարվա ընթացքում Պահառուն ապահովում է հաճախորդի կողմից դեպո հաշվի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:

ԳԼՈՒԽ 10

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ, ԶԵՂՋԱՏՈՎՈՍԻ, ՏՈԿՈՍԱՅԻՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՎՃԱՐՈՒՄ

88. Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի մարումը (ազատ, գրավադրված և արգելադրված) իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկը՝ համաձայն ՀՀ նորմատիվային իրավական ակտերի: Եթե պարտատոմսերի մարման օրը կա այլ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ, ապա մարման և աճուրդի գործառնությունները կարող են կատարվել միաժամանակ հաշվանցման սկզբունքով:
89. Եթե պարտատոմսերի մարման օրը ՀՀ գործող օրենսդրության համաձայն ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումն իրականացվում է առաջիկա աշխատանքային օրը:
90. Պարտատոմսերի մարման, զեղջատուկոսի, տոկոսային, արժեկտրոնային եկամտի վճարված գումարները ՀՀ Կենտրոնական Բանկում Պահառուի հաշվին նստելուց հետո, Պահառուն իրականացնում է համապատասխան փոխանցումներ հաճախորդների դեպո հաշիվներին: Հաճախորդները, գործառնության կատարման վերաբերյալ տեղեկացվում են համապատասխան փաստաթղթերով (Տես սույն կանոնների “Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները» 13-րդ գլուխը):

ԳԼՈՒԽ 11

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

91. Պարտատոմսերի գրավատու կարող է հանդիսանալ միայն դրանց սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, մինչդեռ

պարտատոմսերի գրավառու կարող է լինել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ անկախ սեփականության իրավունքով իրեն պատկանող պարտատոմսերի առկայությունից: Գրավառուն գրավի պայմանագիրը կնքելուց առաջ պետք է ունենա դեպո հաշիվ:

92. Գրավի առարկա կարող են հանդիսանալ միայն այն պարտատոմսերը, որոնց նկատմամբ գրավատուի իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի դեպո հաշվում առկա պարտատոմսերը), և որոնցով ՀՀ օրենսդրության համաձայն՝ կարող են կատարվել գրավադրման գործառնություններ:
93. Պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել միայն ՀՀ օրենսդրության համաձայն գրավատուի և գրավառուի միջև գրավոր պայմանագիր կնքելու և ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվային իրավական ակտերով սահմանված կարգով պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը գրանցելու միջոցով:
94. Պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունները կարող են կատարվել միայն պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ամրագրող Պահառուի միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է Պահառուի կողմից այն գրանցվելու պահից:
95. Գրավադրված պարտատոմսերի հաշվառումը Պահառուն իրականացնում է ըստ առանձին գրավատուների՝ վերջիններիս “գրավով սահմանափակված” դեպո հաշվով:
96. Պարտատոմսերով կարող են իրականացվել գրավի հետ կապված ստորև ներկայացված գործառնությունները:
- 1) Պարտատոմսերի գրավադրում
 - 2) Պարտատոմսերի գրավից հանում
 - 3) Գրավի առարկայից հրաժարում
 - 4) Գրավադրված պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարում
 - 5) Գրավի առարկայի փոխարինում
 - 6) Գրավատուի փոխարինում
 - 7) Գրավառուի փոխարինում
 - 8) Գրավադրված պարտատոմսերի մարում
 - 9) Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարում
 - 10) Գրավադրված պարտատոմսերի արգելադրում, արգելանքից հանում և փոխանցում
97. Պարտատոմսերի գրավադրման ժամանակ սահմանափակվում է պարտատոմսերն ազատ տնօրինելու գրավատուի իրավունքը, և գրավադրված պարտատոմսերի նկատմամբ ծագում է գրավառուի գրավի իրավունքը: Պարտատոմսերի գրավադրման գործառնության

դեպքում պարտատոմսերը գրավատուի ազատ դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի գրավադրված դեպո հաշվի վրա՝ այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ: Եթե պարտատոմսերի գրավադրումն ուղեկցվում է դրամական միջոցների փոխանցմամբ, ապա միաժամանակ իրականացվում է նաև դրամական միջոցների փոխանցում գրավառուից գրավատուին:

98. Պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել՝

- 1) հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, երբ պարտատոմսերի գրավադրման հետ միաժամանակ գրավառուի կողմից իրականացվում է փոխառության տրամադրումը, կամ
- 2) առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, երբ պարտատոմսերի գրավադրումը չի ուղեկցվում գրավառուի կողմից միաժամանակ փոխառության տրամադրմամբ:

99. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, պարտատոմսերի գրավադրման գործառնություններն իրականացվում են հետևյալ պայմաններով.

- 1) Պարտատոմսերի գրավադրումը հոգուտ գրավառուի չի ուղեկցվում միաժամանակ գրավառուի կողմից գրավատուին ՀՀ դրամով փոխառության տրամադրմամբ:
- 2) Պարտատոմսերի գրավադրման գործառնությունը նախաձեռնում է գրավատուն: Գրավադրման համար Գրավատու հաճախորդը Պահառուին պետք է ներկայացնի՝

ա. գրավառուի հիմնադիր փաստաթղթերի փաթեթը՝ դեպո հաշվի բացման համար պահանջվող փաթեթին համապատասխան (եթե գրավառուն արդեն ունի հաշիվ Պահառուի մոտ, ապա տրամադրվում է տեղեկություններ Պահառուի մոտ բացված գրավառուի դեպո հաշվի վերաբերյալ),

բ. պարտատոմսերի գրավադրման միակողմանի հանձնարարական (Տես Հավելված # 10),

գ. գրավի մասին պայմանագրի երրորդ օրինակը կամ նոտարական կարգով վավերացված պատճենը:

- 3) Պահառուն իրականացնում է ներկայացված հանձնարարականի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը հաճախորդ-գրավատուի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե Պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Գրավատու հաճախորդին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ:

- 4) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության

ստուգումը համապատասխան ազատ պարտատոմսերի դեպո հաշվում:

ա. Եթե ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված:

բ. Ստուգման դրական արդյունքի դեպքում կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի այլ գրառումներ: Այնուհետև, ՀՀ Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին (գրավառու հաճախորդ ունենալու դեպքում, Պահառուն նույնպես տեղեկացվում է գրավադրման գործառնության վերաբերյալ՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն):

5) Գործառնական օրվա ավարտից հետո ՀՀ Կենտրոնական Բանկը Պահառուին ուղարկում դեպո հաշիվներից համապատասխան քաղվածք (ներ):

6) ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն կատարում է համապատասխան գրառումներ իր մոտ վարվող գրավատուի և/կամ գրավառուի դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. «Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները» :

100. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրման գործառնություններն իրականացվում են հետևյալ կերպ՝

1) Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի կողմից ՀՀ դրամով փոխառության/վարկի տրամադրումը գրավատուին և վերջինիս կողմից պարտատոմսերի գրավադրումը հօգուտ գրավառու-վարկատուի իրականացվում է միաժամանակ :

2) Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Դրա համար հաճախորդ Գրավատուն և/կամ գրավառուն Պահառուին ներկայացնում են համապատասխանաբար 'Պարտատոմսերի գրավադրման հանձնարարականը' (տես Հավելված # 11) և « Պարտատոմսերի գրավ ընդունման հանձնարարականը » (տես Հավելված # 12), գրավադրման պայմանագիրը, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթերը:

3) Բանկը, որպես գրավատուի և/կամ գրավառուի Պահառու իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Ընդ որում,

ա. որպես գրավատուի Պահառու, Բանկը պետք է իրականացնի դեպո հանձնարարականի վավերության ստուգում, անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգում հաճախորդ-գրավատուի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում,

բ. որպես գրավառուի Պահառու, Բանկը պետք է իրականացնի դեպո հանձնարարականի վավերության, անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգում՝ Պահառուի մոտ վարվող հաճախորդ-գրավառուի դրամական հաշվում, կամ գրավառուի դրամական հաշիվն այլ բանկում գտնվելու դեպքում՝ Պահառուին համապատասխան դրամական միջոցների փոխանցման կատարման ստուգում:

- 4) Եթե Պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ:
- 5) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված:
- 6) Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը կատարում է դրամական միջոցների փոխանցում իր մոտ վարվող՝ գրավատուի Պահառուի դրամական հաշվի վրա, իսկ Պահառուական համակարգում՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի այլ գրառումներ (եթե Բանկը միաժամանակ հանդիսանում է և գրավատուի և գրավառուի Պահառու, ապա ՀՀ Կենտրոնական Բանկում դրամական հաշվարկներ չեն իրականացվում, այլ կատարվում են միայն դեպո ձևակերպումներ): Այնուհետև գործառնության կատարման հաստատում է ուղարկում Բանկ, որպես գրավառուի և/կամ գրավատուի Պահառու, ինրպես նաև գործառնական օրվա ավարտից հետո ուղարկվում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:
- 7) ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն կատարում է համապատասխան գրառումներ իր մոտ վարվող գրավատուի և/կամ գրավառուի դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների «Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները» Գլուխ 13.:

101. Գրավից հանման (ազատման) արդյունքում վերականգնվում է գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի ազատ տնօրինման իրավունքը, և վերանում է դրանց նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը:

102. Պարտատոմսերի գրավից հանման գործառնության դեպքում պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի ազատ դեպո հաշվի վրա՝ գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի ազատ տնօրինման իրավունքի վերականգնումով և այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարումով: Եթե պարտատոմսերի գրավից ազատումն ուղեկցվում է դրամական միջոցների փոխանցմամբ (պարտատոմսերի գրավից ազատում հանդիպակաց դրամական միջոցների

փոխանցմամբ), ապա միաժամանակ իրականացվում է դրամական միջոցների փոխանցում գրավատուից գրավառուին: Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը կարող է կատարվել ինչպես գրավադրված պարտատոմսերի ողջ ծավալի, այնպես էլ դրա մի մասի նկատմամբ:

103. Պարտատոմսերի գրավից հանումը կարող է իրականացվել՝

- 1) հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, երբ պարտատոմսերի գրավից հանման հետ միաժամանակ գրավատուի կողմից իրականացվում է փոխառության մարումը, կամ
- 2) առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարտատոմսերի գրավից հանումը չի ուղեկցվում գրավատուի կողմից միաժամանակ փոխառության մարմամբ:

104. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, պարտատոմսերի գրավից ազատում

- 1) Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը, առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման նախաձեռնվում է գրավառու հաճախորդի կողմից՝ «Պարտատոմսերի գրավից հանման միակողմանի հանձնարարական» ներկայացնելու միջոցով (Տես Հավելված #13):
- 2) Պահառուն իրականացնում է փաստաթղթերի համապատասխան ստուգումներ (դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը դեպո հաշվառման համակարգում (տվյալ գրավառուի օգտին տվյալ գրավատուի կողմից բավարար ծավալի պարտատոմսերի գրավադրված լինելու փաստի ստուգում)): Եթե Պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Հաճախորդին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ:
- 3) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը:

ա. Ստուգման բացասական արդյունքի դեպքում դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված:

բ. Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի դադարեցման այլ գրառումներ: Այնուհետև, ՀՀ Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին (գրավատու

հաճախորդ ունենալու դեպքում, Պահառուն նույնպես տեղեկացվում է՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն):

4) Գործառնական օրվա ավարտից հետո ՀՀ Կենտրոնական Բանկը ուղարկում է դեպո հաշիվներից համապատասխան քաղվածք(ներ):

5) ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող Պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և հաճախորդները (գրավառուն և/կամ գրավատուն) սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների «Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները» 13-րդ գլուխը:

105. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավից ազատում

1) Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը, նախաձեռնում է Գրավառուն, որը միաժամանակ ուղեկցվում է գրավատուի կողմից հիմնական պարտավորության (վարկի) մարման գործառնության իրականացմամբ:

2) Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Տվյալ գործառնությունը իրականացնելու համար Պահառուի՝

ա. գրավատու հաճախորդը պետք է ներկայացնի « Պարտատոմսերի գրավից հանման Գրավատուի հանձնարարական »՝ (Տես Հավելված # 14):

բ. գրավառու հաճախորդը պետք է ներկայացնի « Պարտատոմսերի գրավից հանման Գրավառուի հանձնարարական »՝ (Տես Հավելված # 15) և Գրավադրման պայմանագիրը:

3) Պահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Ընդ որում, եթե Բանկը հանդես է գալիս, որպես՝

ա. գրավառուի Պահառու, ապա Պահառուի կողմից իրականացվող ստուգումը պետք է ներառի դեպո հանձնարարականի վավերության և համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը,

բ. գրավատուի Պահառու, ապա Պահառուի կողմից իրականացվող ստուգումն պետք է ընգրկի դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը հաճախորդ-գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգումը Բանկում վարվող հաճախորդ-գրավատուի դրամական հաշվում:

4) Եթե Պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո

հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ:

5) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը իրականացնում է դրամական միջոցների փոխանցում ՀՀ Կենտրոնական Բանկում վարվող գրավառուին սպասարկող Պահառուի դրամական հաշվի վրա և միաժամանակ Պահառուական համակարգում իրականացնում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ ու գրավի իրավունքի դադարեցման այլ գրառումներ (եթե Պահառուն միաժամանակ սպասարկում է և գրավատուին և գրավառուին, ապա ՀՀ Կենտրոնական Բանկում դրամական հաշվարկներ չեն իրականացվում, այլ կատարվում են միայն դեպո ձևակերպումներ): Այնուհետև ՀՀ Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին (եթե Պահառուի հաճախորդը գրավատու է, ապա ուղարկում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից):

6) Պահառուն ՀՀ Կենտրոնական Բանկից ստացած փաստաթղթերի հիման վրա համապատասխան գրառումներ է կատարում իր մոտ վարվող Պահառուական համակարգում, իսկ եթե Պահառուի Հաճախորդը գրավառու է, ապա Բանկը իրականացնում է համապատասխան դրամական փոխանցում գրավառուի կողմից նշված հաշվի վրա, որից հետո գործառնությունը համարվում է կատարված: Գործառնության արդյունքում Պահառուի հաճախորդը (ները) սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>>:

106. Գրավի առարկայից հրաժարումը, գործառույթ է որի արդյունքում դադարում է գրավատուի սեփականության իրավունքը գրավադրված պարտատոմսերի նկատմամբ, և վերջիններս փոխանցվում են գրավառուի սեփականությանը առանց դատարանին դիմելու: Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության չկատարման պարագայում, առանց դատարանի դիմելու, գրավատուն հրաժարվում է գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերից (կամ դրանց մի մասից)՝ հանձնելով դրանք ի սեփականություն գրավառուին: Տվյալ գործառնությունը կարող է կատարվել միայն նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրում կամ նոտարական կարգով վավերացված գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում նման պայման սահմանված լինելու դեպքում:

107. Գրավի առարկայից հրաժարման գործառնության դեպքում պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավառուի ազատ դեպո հաշվի վրա, այդ պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքի և գրավառուի գրավի իրավունքի դադարումով և գրավառուի սեփականության իրավունքի ծագումով:

108. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կարող է կատարվել ինչպես գրավադրված պարտատոմսերի ողջ ծավալի, այնպես էլ դրա մի մասի նկատմամբ:

109. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կողմից:
110. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է հետևյալ կերպ՝
- 1) գրավատուն Պահառուին ներկայացնում է « Գրավադրված պարտատոմսերից հրաժարման հանձնարարական », Տես Հավելված #16 -ը:
 - 2) Պահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հոգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը հաճախորդ-գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե Պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման, և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ:
 - 3) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն ստուգումներ: Ստուգման դրական արդյունքի դեպքում կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի դադարման այլ գրառումներ: Այնուհետև ՀՀ Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին (եթե տվյալ գործառնությունում, Բանկը հանդես է գալիս որպես գրավառուի Պահառու, ապա ՀՀ Կենտրոնական Բանկը տեղեկացնում է Պահառուին գործառնության կատարման մասին՝ ուղարկելով դեպո հանձնարարականի օրինակը): Գործառնական օրվա ավարտից հետո ՀՀ Կենտրոնական Բանկը ուղարկում է համապատասխան դեպո հաշիվներից քաղվածքներ:
 - 4) ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն և/կամ գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>> :
111. Գրավադրված պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարումը գործառույթ է, որի արդյունքում գրավատուն վաճառում է պարտատոմսերը երրորդ անձին և ստացված իրացման գումարից բավարարում է գրավառուի պահանջները:
112. Առանց դատարան դիմելու գրավադրված պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարման գործառնությունը կարող է կատարվել այն դեպքում, եթե այդպիսի գործառնությունն նախատեսված է նոտարական կարգով վավերացված գրավադրման պայմանագրում կամ նոտարական կարգով վավերացված գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում:
113. Տվյալ գործառնությունն իրականացվում է երկու գործառնությունների միջոցով՝ ըստ սույն կանոններում ներկայացված գրավառուի կողմից նախաձեռնված գրավից հանման

գործառնության և այնուհետև գրավատուի կողմից երրորդ անձին գրավից հանված պարտատոմսերի վաճառքի գործառնության: Պարտատոմսերի վաճառքի արդյունքում գրավատուին վճարված դրամական միջոցներն այնուհետև վերջինիս կողմից փոխանցվում են գրավառուին:

114. Գրավի առարկայի փոխարինման արդյունքում գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, և դրանց փոխարեն գրավադրվում են այլ թողարկման պարտատոմսեր: Գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի փոխարինման գործառնությունն իրականացվում է այդ դեպքում, երբ գրավի պայմանագրով գրավադրվել են պարտատոմսեր, որոնց մարման (մասնակի մարման) ժամկետը նախորդում է գրավի պայմանագրում սահմանված հիմնական պարտավորության կատարման ժամկետին, կամ գրավի պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

115. Գրավի առարկայի փոխարինման դեպքում նախկինում գրավադրված (փոխարինվող) պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, որի արդյունքում այդ պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի ազատ դեպո հաշվի վրա, այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարեցմամբ, միաժամանակ փոխարինող պարտատոմսերը գրավադրվում են, որի արդյունքում այդ պարտատոմսերը գրավատուի ազատ դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի գրավադրված դեպո հաշվի վրա, փոխարինող պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ:

116. Գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի փոխարինումը կարող է կատարվել միայն գրավառուի համաձայնության դեպքում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով այլ բան սահմանված չէ:

117. Գրավի առարկայի փոխարինման դեպքում գրավի պայմանագրում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

1) Գրավառուի համաձայնությամբ գրավի առարկայի փոխարինում

ա. Գրավառուի համաձայնությամբ գրավի առարկայի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Գրավառուի համաձայնությամբ գրավի առարկայի փոխարինման համար գրավատու հաճախորդը ներկայացնում է «Գրավատուի գրավի փոխարինման հանձնարարականը» (տես Հավելված # 17) և փոփոխված գրավի պայմանագիրը, իսկ Գրավառուն՝ 'Գրավառուի գրավի փոխարինման հանձնարարականը' (տես Հավելված # 18):

բ. Բանկը, որպես Գրավառուի Պահառու ստուգում է դեպո հանձնարարականի վավերությունը և փոխարինվող գրավի իրավունքի համապատասխան ծավալի առկայությունը, իսկ որպես Գրավատուի Պահառու ստուգում է դեպո հանձնարարականի վավերությունը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի փոխարինվող պարտատոմսերի առկայությունը նրա գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, անհրաժեշտ ծավալի փոխարինող պարտատոմսերի առկայության ստուգումը նրա ազատ դեպո հաշվում, գրավի

պայմանագրի դրույթները: Եթե Պահառուի կողմից իրականացվող արդյունքը.

- բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին (գրավատու և/կամ գրավառու):

- դրական է, ապա Բանկը, ընդունում է դեպո հանձնարարականները կատարման ներկայացնելով համապատասխան դեպո հանձնարարական ՀՀ Կենտրոնական Բանկ:

գ. Եթե գրավատուն և գրավառուն սպասարկվում են Պահառուի մոտ, ապա Պահառուն գրավի առարկայի փոխարինման հանձնարարականը ներկայացնում է ՀՀ Կենտրոնական Բանկ՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող հանձնարարականներն ընդունելուց հետո:

դ. ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի վերաձևակերպման այլ գրառումներ: Այնուհետև գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին, որպես գրավառուի և/կամ գրավատուի Պահառու, ինչպես նաև գործառնական օրվա ավարտից հետո ուղարկվում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:

ե. ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն և/կամ գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում է գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>>:

2) Առանց գրավառուի համաձայնության

ա. Առանց գրավառուի համաձայնության գրավի առարկայի փոխարինման գործառնությունը կարող է նախաձեռնել գրավատուն, ինչի համար պետք է Պահառուին ներկայացվի «Գրավատուի գրավի փոխարինման հանձնարարականը» (տես Հավելված # 17):

բ. Բանկը, որպես գրավատուի սպասարկող Պահառու, ստուգում է դեպո հանձնարարականի վավերությունը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի փոխարինվող պարտատոմսերի առկայությունը նրա գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, անհրաժեշտ ծավալի փոխարինող պարտատոմսերի առկայության ստուգումը նրա ազատ դեպո հաշվում: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի

կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին:

- գ. Դրական արդյունքի դեպքում Պահառուն ստուգում է համապատասխան գրավի պայմանագրի դրույթները: Եթե գրավի պայմանագրով նախատեսված է գրավի առարկայի փոխարինում առանց գրավառուի համաձայնության, ապա Պահառուն իրեն ներկայացված հանձնարարականի և գրավի պայմանագրի կրկնօրինակները կից գրությամբ ներկայացնում է գրավառուի Պահառուին՝ խնդրելով տալ գրավի առարկայի փոխարինման հաստատում: Այնուհետև, Պահառուն գրավառուին սպասարկող Պահառուի հետ համաձայնեցված ժամկետում համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ:
- դ. Եթե տվյալ գործարքում, Բանկը հանդես է գալիս որպես Գրավառուի Պահառու, ապա ստանալով գրավատուի Պահառուից գրություն կից փաստաթղթերով և համոզվելով, որ տվյալ գործառնությունը կարող է իրականացվել առանց գրավառուի համաձայնության, պետք է ՀՀ Կենտրոնական Բանկ ներկայացնի «Գրավառուի գրավի փոխարինման հանձնարարականը» (տես Հավելված # 18): Եթե Գրավառուի Պահառուի համոզմամբ տվյալ գործառնությունը չի կարող իրականացվել առանց գրավառուի համաձայնության, նա պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել գրավատուին սպասարկող Պահառուին, որից հետո տարածայնությունները կարգավորվում են անմիջապես գրավատուի և գրավառուի կողմից:
- ե. ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի վերաձևակերպման այլ գրառումներ՝ Բանկ ներկայացնելով գործառնության կատարման հաստատում: Այնուհետև գործառնության կատարման հաստատում է ուղարկում Բանկ, որպես գրավառուի և/կամ գրավատուի Պահառու, ինչպես նաև գործառնական օրվա ավարտից հետո ուղարկվում է քաղվածք՝ համապատասխան դեպո հաշիվներից:
- զ. ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն և/կամ գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>> :

118. Գրավատուի փոխարինումը գործառույթ է որի արդյունքում գրավադրված պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (նոր գրավատուի)՝ պահպանելով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի

իրավունքը: Գրավատուի փոխարինման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի: Գրավատուի փոխարինման դեպքում գրավադրված պարտատոմսերը գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվից փոխանցվում են նոր գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվի վրա՝ միաժամանակ միևնույն գրավառուի անունով գրավի իրավունքի համապատասխան վերագրանցմամբ:

119. Պարտատոմսերի գրավատուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կամ իրավահաջորդության դեպքում՝ պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձի (նոր գրավատուի) կողմից: Մասնավորապես պարտատոմսերի գրավատուն կամ իրավահաջորդության դեպքում՝ պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձը (նոր գրավատուն) Պահառուին ներկայացնում է՝

1) « Գրավատուի փոխարինման հանձնարարական » (տես Հավելված # 19), որի վրա պետք է առկա լինեն գրավառուի, նոր գրավատուի համաձայնությունը արտացոլող գրառում՝ վավերացված իրենց սպասարկող ենթապահառուների կողմից: Գրավառուի համաձայնությունը չի պահանջվում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով սահմանված է, որ գրավառուի համաձայնությունը չի պահանջվում

2) ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավահաջորդությունը հավաստող փաստաթղթեր:

120. Պահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ, ինչպես նաև հոգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա Բանկը, որպես գրավատուի Պահառու համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ՝ կցելով ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:

121. ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի վերաձևակերպման այլ գրառումներ՝ Պահառուին ներկայացնելով գործառնության կատարման հաստատում, ինչպես նաև գործառնական օրվա ավարտից հետո ուղարկվում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից: Եթե Գրավատուի փոխարինման գործառնությունում Պահառուն հանդես է գալիս, որպես գրավառուի և/կամ նոր գրավատուի Պահառու, ապա ՀՀ Կենտրոնական Բանկը պետք է Պահառուին ներկայացնի գրավատուի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակը, և ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:

122. ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն

իրականացնում է համապատասխան գրառումներ իր մոտ վարվող Պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված և գրավառուն և/կամ գրավատուն և/կամ նոր գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք, փաստաթղթերի կրկնօրինակներ) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>>:

123. Գրավառուի փոխարինումը գործառույթ է, որի արդյունքում գրավառուի գրավի իրավունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը:
124. Գրավառուի փոխարինումը գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքների փոխանցումն է այլ անձի (նոր գրավառուի)՝ պահանջը զիջելու միջոցով պարտատիրոջ իրավունքները այլ անձի անցնելու կանոններին համաձայն:
125. Գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները նոր գրավառուին զիջելը վավեր է, եթե նոր գրավառուին զիջվել է գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը:
126. Գրավառուի իրավունքները նոր գրավառուին անցնելու համար գրավատուի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
127. Գրավառուի փոխարինման դեպքում փոփոխվում են միայն գրավի իրավունքի գրառումները՝ նախկին գրավառուի գրավի իրավունքը դադարում է, այդ գրավի իրավունքը վերագրանցվում է նոր գրավառուի վրա:
128. Գրավառուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է նախկին գրավառուի կողմից: Գրավառուի փոխարինման համար նախկին գրավառուն Պահառուին ներկայացնում «Գրավառուի փոխարինման դեպո հանձնարարական» (տես Հավելված # 21), ինչպես նաև գրավադրված պարտատոմսերի նկատմամբ նոր գրավառուի իրավունքները հավաստող փաստաթղթեր: Դրանք են՝
 - 1) ՀՀ օրենսդրության համաձայն կազմված ցեսիայի պայմանագիրը, ըստ որի՝ գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները զիջվում են նոր գրավառուին (այդ պայմանագիրը պետք է համապատասխանեցված լինի գրավի պայմանագրին).
 - 2) ՀՀ օրենսդրության համաձայն կազմված ցեսիայի պայմանագիրը, ըստ որի՝ գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը զիջվում է նույն անձին (նոր գրավառուին) (այդ պայմանագիրը պետք է համապատասխանեցված լինի գրավի պայմանագրին).
 - 3) եթե օրենքով կամ գրավի պայմանագրով գրավառուի փոխարինման գործառնության համար պահանջվում է գրավատուի համաձայնությունը, ապա գրավառուի փոխարինման դեպո հանձնարարականի վրա պետք է առկա լինի գրավատուի համաձայնությունն արտացոլող գրառում՝ վավերացված գրավատուին սպասարկող ենթապահառուի կողմից:

129. Պահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի ստուգումներ, ինչպես նաև համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա Պահառուն համապատասխան դեպո հանձնարարականը ներկայացնում է « Կենտրոնական Բանկ՝ կցելով ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:
130. « Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է « Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա կատարում է գրավի իրավունքի վերաձևակերպման գրառումներ, այնուհետև « Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին: Եթե Պահառուն, գրավառուի փոխարինման գործառնությունում հանդես է գալիս որպես գրավատուի/նոր գրավառուի Պահառու, ապա « Կենտրոնական Բանկը ներկայացնում է նախկին գրավառուի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակները, որոնք հավաստում են տվյալ գործառնության կատարման փաստը՝ կից ներկայացնելով նաև ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:
131. « Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն իրականացնում է համապատասխան գրառումներ իր մոտ վարվող Պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, ինչի մասին հաճախորդը տեղեկացվում է սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, փաստաթղթերի կրկնօրինակներ)՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. ««Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները»»:
132. Գրավադրված պարտատոմսերի մարումը գործառույթ է, որի արդյունքում, համաձայն պարտատոմսերի թողարկման պայմանների, իրականացվում է գրավադրված պարտատոմսերի կամ մասնակի մարման դեպքում դրանց մի մասի մարումը, դադարում են մարված պարտատոմսերի նկատմամբ բոլոր իրավունքները, և առաջանում են համապատասխան գույքային իրավունքներ մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հանդեպ:
133. Գրավադրված պարտատոմսերի մարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորությունները ժամանակին չկատարելու, գրավի առարկան ժամանակին չփոխարինելու կամ այլ դեպքերում պարտատոմսերը տվյալ թողարկման մարման, մասնակի մարման օրվա դրությամբ մնում են գրավի տակ:
134. Գրավադրված պարտատոմսերի մարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պարտատոմսերի ողջ ծավալի մարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է « Կենտրոնական Բանկի կողմից:
135. Գրավադրված պարտատոմսերի մարման դեպքում գրավի առարկա են դառնում մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները, և իրականացվում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում) որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի: Մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները

մուտքագրվում են Բանկի 'գրավադրված պարտատոմսերի մարումից առաջացած միջոցներ' դրամական հաշվի վրա:

136. Գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի հաշվառումը իրականացվում է հետևյալ կերպ՝

1) ՀՀ Կենտրոնական Բանկը գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները փոխանցում է ՀՀ Կենտրոնական Բանկում բացված Պահառուի միջանկյալ հաշվին (եթե բանկի հաճախորդը գրավատուն է): Տվյալ փոխանցման վերաբերյալ ՀՀ Կենտրոնական Բանկը տեղեկացնում է Պահառուին, որպես գրավատուի և/կամ գրավառուի Պահառու: Միաժամանակ ՀՀ Կենտրոնական Բանկը իրականացնում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում), որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի:

2) Ոչ ուշ, քան հինգ բանկային օրվա ընթացքում, Բանկը որպես գրավատուի Պահառու պարտավոր է ՀՀ Կենտրոնական Բանկ ներկայացնել՝

ա. համաձայնագիր, ըստ որի՝ գրավատուն և գրավառուն համաձայնում են առ այն, որ գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները հաշվառվեն երրորդ անձ հանդիսացող Բանկում: Տվյալ համաձայնագիրը պետք է վավերացվի գրավատուի, գրավառուի, Պահառուի և/կամ այլ պահառուի կողմից (եթե գրավառուի պահառուն Բանկը չէ):

բ. Միջանկյալ հաշվից դրամական միջոցները փոխանցելու վճարման հանձնարարականը:

գ. Եթե հինգ բանկային օրվա ընթացքում Բանկը, որպես գրավատուի Պահառու չներկայացնի վերը նշված փաստաթղթերը, ապա ՀՀ Կենտրոնական Բանկը իրավասու է գրավադրված գումարները փոխանցել նոտարի դեպոզիտ՝ միաժամանակ տրամադրելով նոտարին տեղեկություններ գրավադրված գումարների հետ կապված գրավատուի և գրավառուի ենթապահառուների վերաբերյալ:

3) Ստացված համաձայնագրի և վճարման հանձնարարականի հիման վրա ՀՀ Կենտրոնական Բանկը դրամական միջոցները փոխանցում է միջանկյալ հաշվից գրավի իրավունքը հաշվառող Բանկի թղթակցային հաշվի վրա և հանում է դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը իր հաշվառումից՝ տեղեկացնելով Բանկին: Բանկը նաև տեղեկացվում է, եթե հանդիսանում է գրավառուի Պահառու:

4) Բանկը բանկային փոխանցման և իրեն ներկայացված համաձայնագրի օրինակի հիման վրա մուտքագրում է դրամական միջոցներն իր մոտ բացված գրավատուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա և հետագայում իրականացնում է այդ գրավի հաշվառման սպասարկումը գրավատուի և գրավառուի հանձնարարականների հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշման հիման վրա:

5) Գործառնության կողմ հանդիսացող Բանկի հաճախորդը տեղեկացվում է գործառնության

կատարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերով (քաղվածք, տեղեկանք)՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>> :

137. Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարումը գործառույթ է, որի արդյունքում, համաձայն պարտատոմսերի թողարկման պայմանների, պարտատոմսերի սեփականատերերին վճարվում է պարտատոմսերի տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը :
138. Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ ըստ պարտատոմսերի թողարկման պայմանների՝ տվյալ պարտատոմսերի դիմաց թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում վճարվում է արժեկտրոնային կամ տոկոսային եկամուտ (այսուհետ՝ տոկոսներ) :
139. Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պարտատոմսերի ողջ ծավալի տոկոսների վճարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից :
140. Գրավառուի գրավի իրավունքը տարածվում է գրավադրված պարտատոմսերից ստացված տոկոսների վրա՝ գրավի պայմանագրով նախատեսված դեպքերում : Գրավի պայմանագրում նման պայման սահմանված չլինելու դեպքում տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը պետք է ազատ տնօրինվի գրավատուի կողմից :
141. Եթե Բանկը հանդես է գալիս, որպես գրավատուի Պահառու, ապա գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը իրականացվում է հետևյալ կերպ՝
 - 1) ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից տոկոսները հաշվեգրվում են ՀՀ Կենտրոնական Բանկում վարվող Պահառուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա, ինչի մասին Պահառուն տեղեկացվում է :
 - 2) Եթե գրավի պայմանագրով նախատեսված չէ գրավի իրավունքի տարածում գրավադրված պարտատոմսերի դիմաց ստացված տոկոսների վրա, ապա Բանկը, որպես գրավատուի Պահառու ներկայացնում է այդ միջոցները բանկում իր թղթակցային կամ բանկային հաշվի վրա փոխանցման վճարման հանձնարարական՝ վավերացված նաև գրավատուի ենթապահառուի կողմից: Բանկի կողմից վճարման հանձնարարականը կատարելուց հետո, Բանկը, որպես գրավատուի Պահառու իրականացնում է այդ տոկոսների վճարումը իր հաճախորդ գրավատուին՝ մուտքագրելով տոկոսների գումարը իր մոտ վարվող գրավատուի դրամական հաշվի վրա, կամ եթե գրավատուի դրամական հաշիվը գտնվում է այլ բանկում՝ իրականացնելով փոխանցում այդ հաշվի վրա:
 - 3) Եթե գրավի պայմանագրով նախատեսված է գրավի իրավունքի տարածում գրավադրված պարտատոմսերի դիմաց ստացված տոկոսների վրա, ապա գործում են սույն կարգի պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների համար սահմանված կանոնները :

142. Գրավադրված պարտատոմսերի արգելադրումը, արգելքից հանումը և փոխանցումը իրականացվում է ՀՀ Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Արգելադրված (կալանված) պարտատոմսերի համար նախատեսված է հատուկ ենթաբաժին հաճախորդի դեպո հաշվում:
143. Գրավադրված պարտատոմսերի արգելադրման արդյունքում արգելակվում է պարտատոմսերի տնօրինումը ցանկացած անձի կողմից՝ պահպանելով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը և գրավառուի գրավի իրավունքը և թույլատրելով արգելանքի տակ գտնվող պարտատոմսերի հետ կատարել գործառնություններ միայն դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշմամբ: Տվյալ գործառնության իրականացման համար հաճախորդը Պահառուին պետք է ներկայացնի 'Պարտատոմսերի արգելադրման հանձնարարական' (տես Հավելված # 21):
144. Գրավադրված պարտատոմսերի արգելանքից հանման արդյունքում պարտատոմսերից հանվում է արգելակումը, և պարտատոմսերը կարող են տնօրինվել գրավադրված պարտատոմսերի համար սահմանված կանոնների համաձայն: Տվյալ գործառնության իրականացման համար հաճախորդը Պահառուին պետք է ներկայացնի « Պարտատոմսերի արգելանքից հանման հանձնարարական » (տես Հավելված # 22):
145. Գրավադրված պարտատոմսերի փոխանցման արդյունքում դատական ակտի հիման վրա պարտատոմսերի նկատմամբ կարող են վերականգնվել սեփականության և/կամ գրավի՝ մինչև արգելադրումը եղած իրավունքները կամ դադարեցվել հին և գրանցվել սեփականության և (կամ) գրավի նոր իրավունքներ : Տվյալ գործառնության իրականացման համար հաճախորդը Պահառուին պետք է ներկայացնի « Արգելադրված պարտատոմսերի փոխանցման հանձնարարական » (Տես Հավելված # 23):
146. Պահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի ստուգումներ, ինչպես նաև համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումներ: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա Պահառուն համապատասխան դեպո հանձնարարականը ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ՝ կցելով ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները :
147. ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համապատասխան ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա կատարում է գրավի իրավունքի վերաձևակերպման գրառումներ, այնուհետև ՀՀ Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Պահառուին:
148. ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա Պահառուն իրականացնում է համապատասխան գրառումներ իր մոտ վարվող Պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, ինչի մասին գործառնության կողմերը տեղեկացվում են սահմանված փաստաթղթերով (տեղեկանք,

փաստաթղթերի կրկնօրինակներ և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր)՝ համաձայն Կանոնների Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>> :

ԳԼՈՒԽ 12

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

149. Պարտատոմսերի շրջանառությունը երկրորդային շուկայում պարտատոմսերի օտարման հատուցելի և անհատույց գործարքների իրականացումն է : Մասնավորապես՝
- 1) Պարտատոմսերի օտարման հատուցելի գործարքները պարտատոմսերի առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պարտատոմսերի փոխանակման, ինչպես նաև << օրենսդրությամբ թույլատրված գույքի հատուցելի օտարման այլ գործարքներն են :
 - 2) Պարտատոմսերի օտարման անհատույց գործարքները պարտատոմսերի նվիրատվության, ժառանգելու գործարքներն են, ինչպես նաև իրավաբանական անձի վերակազմակերպման հետևանքով պարտատոմսերի օտարումն է :
150. Պարտատոմսերի օտարման գործարքներն իրականացվում են << օրենսդրությամբ և << Կենտրոնական Բանկի նորմատիվային իրավական ակտերով սահմանված կարգով և հետևյալ փուլերով՝ գործարքի կնքում, դեպո հաշվարկների, անհրաժեշտության դեպքում՝ նաև դրամական հաշվարկների իրականացում, գործարքի կողմերի տեղեկացում: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է համարվում (պարտատոմսերը օտարված են համարվում) դեպո հաշվարկների կատարման արդյունքում Պահառուի կողմից սույն կանոններով սեփականատիրոջ դեպո հաշիվներում այն գրանցելու պահից:
151. Պարտատոմսերի ռեպո (հակադարձ ռեպո) գործարքները կարող են կնքվել գործարքի մասնակիցների միջև փոխհամաձայնեցված կարգով: Պարտատոմսերի ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների դեպո և դրամական հաշվարկներն իրականացվում են առուվաճառքի գործարքների հաշվարկների համար սահմանված << Կենտրոնական Բանկի նորմատիվային իրավական ակտերի դրույթներին համաձայն:
152. Պարտատոմսերի առուվաճառքի գործարքները կարող են կնքվել բորսայական, արտաբորսայական առևտրի միջոցով կամ «ՍԻ ԲԻ ԷՅ նեթ» առևտրային համակարգի միջոցով :
153. Առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի կարգավիճակով դեպո հաշվում առկա պարտատոմսերը):
154. Առուվաճառքի գործարքների կնքման դեպքում գործարքի նախաձեռնող է գնորդը (ստացողը) կամ վաճառողը (առաքողը): Գործարքի իրականացման համար գործարքի նախաձեռնողը ներկայացնում է համապատասխան պատվեր կամ կնքում է պայմանագիր, որտեղ նշվում է գործարքի գինը և (կամ) ծավալը, ինչպես նաև եկամտաբերությունը, որի չափով գործարքի մասնակիցը ցանկանում է գնել կամ վաճառել պարտատոմսեր: Պետական պարտատոմսերով բրոքերային գործարք իրականացնելու համար հաճախորդը պարտատոմսերի գնման/վաճառքի պատվեր է ներկայացնում Բանկ: Պատվերի

ներկայացման կարգն ու ժամկետները սահմանվում են ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ի «Բորքերային ծառայությունների մատուցման կանոններ»-ին համաձայն: Պարտատոմսերի գնման/վաճառքի պատվերի ձևը ներկայացված է Հավելված #24-ում:

155. Պարտատոմսերով դեպո հաշվարկները կարող են իրականացվել միայն Պահառուի կողմից: Գործարքի մասնակիցների միջև դրամական հաշվարկները կարող են կատարվել ՀՀ օրենսդրության համաձայն՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով:
156. Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված է դրամական հաշվարկների իրականացում կանխիկ եղանակով, կամ անկանխիկ եղանակով, բայց կանխավճարի կամ ապահով վաճառքի պայմաններով, ապա
 - 1) Գործարքի առաքող կողմը կամ վերջինիս կողմից լիազորված անձը Պահառուին պետք է ներկայացնի «Պարտատոմսերի ազատ առաքման» դեպո հանձնարարական (տես Հավելված #25):
 - 2) Պահառուն պետք է իրականացնի դեպո հանձնարարականի վավերության և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը առաքողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ, բացառությամբ այն դեպքերի եթե առաքողը և ստացողը սպասարկվում են Պահառուի մոտ (դեպո հաշվարկները սահմանափակվում են Պահառուի մոտ):
 - 3) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպո հանձնարարականը իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում՝ ՀՀ Կենտրոնական Բանկը իրականացնում է պարտատոմսերի համապատասխան փոխանցում և վերջինիս կատարման վերաբերյալ ուղարկում է հաստատում: Եթե Բանկը տվյալ գործարքում հանդես է գալիս որպես պարտատոմսերի ստացողի Պահառու, ապա նրան ուղարկվում է առաքողի Պահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը (դեպո հանձնարարականի օրինակը չի ուղարկվում եթե գործառնությունը իրականացվել է Բանկի և նրա հաճախորդի միջև): Գործառնական օրվա ավարտից հետո ՀՀ Կենտրոնական Բանկը Պահառուներին ուղարկում է քաղվածքներ համապատասխան դեպո հաշիվներից:
 - 4) ՀՀ Կենտրոնական Բանկից ստացված փաստաթղթերի հիման վրա նույն գործառնական օրվա ընթացքում Բանկը, որպես ստացողի Պահառու մուտքագրում է պարտատոմսերը ստացողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվի վրա, իսկ որպես առաքողի Պահառու՝ ելքագրում է առաքման համար հաշվառված առաքողի պարտատոմսերը: Այնուհետև գործառնությունը համարվում է կատարված, և հաճախորդը (ները) սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Հաշվետվությունների տրամադրման կարգ և Գլուխ 13. <<Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները>>:

157. Պարտատոմսերի առուվաճառքի 'առաքում' վճարման դիմաց՝ սկզբունքով դեպոսիտ հրամական հաշվարկներն իրականացվում են հետևյալ կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

1) Առուվաճառքի կողմեր հանդիսացող հաճախորդները (կամ նրանց կողմից լիազորված անձինք) պետք է Պահառուին ներկայացնեն՝

ա. «Պարտատոմսերի վաճառքի դեպոսիտ հանձնարարականը», եթե հաճախորդը պարտատոմսերը առաքողն է (վաճառողը) (տես Հավելված # 26):

բ. «Պարտատոմսերի գնման դեպոսիտ հանձնարարականը», եթե հաճախորդը պարտատոմսերը ստացողն է (գնորդը) (տես Հավելված # 27):

2) Առուվաճառքի դեպոսիտ հանձնարարականը ներկայացվում է Պահառուի և հաճախորդի միջև փոխհամաձայնեցված եղանակով՝ Բանկի գործառնական ժամերի ընթացքում: Եթե դեպոսիտ հանձնարարականն ընդունվել է Պահառուի կողմից սահմանված ժամերից հետո, ապա այն համարվում է ներկայացված հաջորդ աշխատանքային օրը: Պահառուի կողմից դեպոսիտ հանձնարարականը կատարվում է դրանում նշված կատարման օրը՝ սույն կարգով սահմանված ստուգման արդյունքը դրական լինելու դեպքում: Դեպոսիտ հանձնարարականում կատարման օր նշված չլինելու դեպքում այն կատարվում է ներկայացման օրը: Եթե Պահառուն չի կարող կատարել հաճախորդի կողմից ներկայացված դեպոսիտ հանձնարարականը դրանում նշված կատարման օրը, նա վերադարձնում է հաճախորդին դեպոսիտ հանձնարարականը առանց կատարման՝ նշելով մերժման պատճառը:

3) Բանկը, որպես առաքողի Պահառու իրականացնում է ներկայացված դեպոսիտ հանձնարարականի վավերության ստուգում և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայություն առաքողի ազատ պարտատոմսերի դեպոսիտ հաշվում, իսկ որպես ստացողի Պահառու իրականացնում է ներկայացված դեպոսիտ հանձնարարականի վավերության ստուգում և անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգում իր մոտ վարվող ստացողի դրամական հաշվում կամ ստացողի դրամական հաշիվն այլ բանկում գտնվելու դեպքում՝ Բանկի համապատասխան դրամական միջոցների փոխանցման կատարման ստուգում: Եթե ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպոսիտ հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է հաճախորդին: Հակառակ դեպքում Պահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպոսիտ հանձնարարական է ներկայացնում ՀՀ Կենտրոնական Բանկ, բացառությամբ այն դեպքերի երբ Բանկը միաժամանակ հանդիսանում է և ստացողի և առաքողի Պահառու (այդ դեպքում հաշվարկները սահմանափակվում են Պահառուի մոտ):

4) ՀՀ Կենտրոնական Բանկը, ստանալով դեպոսիտ հանձնարարականը իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպոսիտ հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Բանկ, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ Կենտրոնական Բանկը կատարում է դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումներ: Այնուհետև ՀՀ Կենտրոնական Բանկը գործառնության կատարման հաստատում է ուղարկում Բանկ, որպես առաքողի և/կամ ստացողի Պահառու, ինչպես նաև գործառնական օրվա ավարտից հետո ուղարկում է քաղվածքներ համապատասխան դեպոսիտ հաշիվներից:

5) ՀՀ Կենտրոնական Բանկը ստացված հաստատման հիման վրա նույն

գործառնական օրվա ընթացքում Բանկը՝

ա. որպես ստացողի Պահառու մուտքագրում է պարտատոմսերը ստացողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվի վրա՝ միաժամանակ ելքագրելով պարտատոմսերի առքի համար հաշվառված դրամական միջոցները:

բ. որպես առաքողի Պահառու ելքագրում է վաճառքի համար հաշվառված առաքողի պարտատոմսերը և միաժամանակ վճարում վաճառված պարտատոմսերի դիմաց ստացված դրամական միջոցները առաքողին, իսկ առաքողի դրամական հաշիվը այլ Պահառուի մոտ կամ առևտրային բանկում գտնվելու դեպքում՝ իրականացնում դրամական միջոցների փոխանցում առաքողի կողմից նշված դրամական հաշվի վրա:

- 6) Այնուհետև գործառնությունը համարվում է կատարված, և հաճախորդը սահմանված ժամկետներում Պահառուից ստացված քաղվածքներով տեղեկացվում է գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների «Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները» 13-րդ գլուխը:
- 7) Եթե առուվաճառքի գործարքի մի կողմը Բանկն է, իսկ մյուսը հաճախորդը, ապա Պահառուն ընդունելով հաճախորդի «Պարտատոմսերի վաճառքի» (Պարտատոմսերի գնման) դեպո հանձնարարականը, դրա հիման վրա կազմում և ներկայացնում է ՀՀ Կենտրոնական Բանկ «ազատ առաքման» դեպո հանձնարարական: ՀՀ Կենտրոնական Բանկը իրականացնում է ՀՀ Կենտրոնական Բանկի կանոններին և ընթացակարգերին համաձայն ստուգումներ: Եթե իրականացված ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է Պահառուին, և գործառնությունը համարվում է մերժված: Ստուգման դրական արդյունքի դեպքում՝ ՀՀ Կենտրոնական Բանկը իրականացնում է պարտատոմսերի համապատասխան փոխանցում և վերջինիս կատարման վերաբերյալ ուղարկում է հաստատում: Գործառնական օրվա ավարտից հետո ՀՀ Կենտրոնական Բանկը Պահառուներին ուղարկում է քաղվածքներ համապատասխան դեպո հաշիվներից: Պահառուն, ՀՀ Կենտրոնական Բանկից ստանալով գործառնության կատարման հաստատումը, իրականացնում է դեպո և դրամական հաշվարկները և հաճախորդը սահմանված ժամկետներում տեղեկացվում է գործառնության կատարման վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Գլուխ 13. «Հաշվետվությունների տրամադրման կարգ և ժամկետները»:
- 8) Եթե առուվաճառքի գործարքները հաճախորդի կարգադրությամբ կնքվում են պարտատոմսերի երկրորդային շուկայում՝ բրոքերների միջոցով, ապա հաճախորդների անունից «Պարտատոմսերի վաճառքի» և «Պարտատոմսերի գնման» դեպո հանձնարարականները ներկայացնում է Բրոքերը, որն էլ իր հերթին պետք է ներկայացնի հանձնարարականները Պահառուին:
- 9) Բորսայում պետական պարտատոմսերով գործարքներ կարող են կնքվել առևտրային նստաշրջանի ընթացքում՝ Բորսայի 'Առևտրի ընդհանուր կանոններով': Բորսայում պետական պարտատոմսերով գործարքները կնքվում են լրիվ նախնական դեպոնացմամբ բորսայական առևտրի պայմաններում: Բորսայական գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Բանկը, որպես պետական պարտատոմսերի շուկայի մասնակից, մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը իրենց իրավասու դրամային /դեպո/ հաշիվներից Բորսայի դրամային /դեպո/ առևտրային հաշիվներին են փոխանցում

(դեպոնացնում) բորսայական առևտրի համար նախատեսված պետական պարտատոմսերը և դրամային միջոցները: Պարտատոմսերի նախնական դեպոնացման համար հաճախորդը (նրա լիազորված ներկայացուցիչը /հաճախորդի բրոքերը) Պահառուին պետք է ներկայացնի «Արժեթղթերի ազատ առաքման հանձնարարական» (տես Հավելված # 25): Տվյալ հանձնարարականը պետք է ներկայացվի Պահառուին առևտրային նստաշրջանին նախորդող օրը՝ մինչև Բանկի գործառնական օրվա ավարտը:

ԳԼՈՒԽ 13

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

